դաղենացին որուն ընկերներն են միւս Մարիամը՝ որ կ'ըսուի Մարիամ Յակոբայ Սողոմէ՝ մայր որդւոցն Զեբեդեայ. Յովհաննա՝ Հերովդէսի հազարապետ Քուզայի կինը, նաև Շուշան և ուրիշներ որ կը ծառայեն Յիսուսի։ Ասոնք էին որ օծեցին եւ խնկեցին Յիսուսի մարմինը, միաշաբաթի օրը արևագալին գացին գերեզման։ Յարուցեալ Յիսուս երևցաւ Մարիամ Մագդաղենացիին ու այս վերջինը գնաց պատմեց անոնց՝ որ կու լային և կը սգային։ Յարուցեալ Յիսուս երևցաւ նաեւ Իւղաբեր կանանց ու ըսաւ. «Ողջ էք, եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա եւ երկրպագին նմա» (Մատթ. ԻԸ. 9–10)։ Իւղաբեր կանանց եկեղեցիին պատմութեան և նկարագրութեան մասին տես նել Հ. Վ. Ե. (էջ 167–172)։

Իւղաբերից եկեղեցիին հին աւանդութիւններէն կը յիշուին հետևեալները։ 1484ին երբ Փելիքս Ֆապրի կ'այցելէ այս սրբավայրին տեղը՝ որ իսլամական տան մը վերածուած էր, կը գրէ. «Երբ Ս. Յակոբի վանքէն դուրս ելանք, փողոցին երկարութեամբ գացինք և մեր ճամբուն վրայ գտանք մեծ քար մը։ Հին քրիստոնեաները այդտեղ գրած էին զայն, որովհետեւ հոն երեւցած էր Տէրը Իւղաբեր կանանց՝ երբ անոնք ետ կը դառնային գերեզմանէն, և ըսած անոնց «Ողջ էք. և նոքա մատուցեալ կալան զոտս նորա և երկրպագին նմա»։ Հոն մենք ալ խոնարհեցանք եւ համբուրեցինք այն հողը որուն վրայ Տէրը կոխած էր։ Երբեմն հոն շինուած էր եկեղեցի մը զոր Սարակինոսները քանդեցին, ինչպէս նաեւ ուրիշ եկեղեցիներ։ Այս քարին քովի ճանապարհը կը տանի դէպի Ս. Գերեզման. ուխտաւորները միշտ այս տեղէն կ'անցնին հոն երթալու համար. ես ալ գրեթէ օրը վեց անգամ